

Ամերիկայի Արեւմտեան թեմէն ներս

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԸԷԳ ԳԱԼԱՅԾԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Այսու հոգեկան գոհունակութեամբ կը փափաքինք յայտնել թեմիս հոգեւոր հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, յարակից բոլոր կազմակերպութիւններուն եւ մեր հաճայն հաւաքացեալ ժողովուրդին, թէ Առաջնորդարանի «Գալայճեան» սրահի բարերար Տիար ԸՇԳ Գալայճեան առ ի գնահատութիւն Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան թեմին կապարած իր կէս միլիոն փոլարի բարերարութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ պարգեւատրուեցաւ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» բարձրագոյն շքանշանով (յոն «Էջմիածին», Գ-Դ, էջ 16):

Պարգեւատրման արարողութիւնը փեղի ունեցաւ Կիրակի, Նոյեմբեր 16-ին, Վեն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ մէջ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերպրեանի մատուցած Սուրբ Պապարագի ընթացքին: Այդ օր Սուրբ Սարգիս Հայց. եկեղեցւոյ Խաչատրեան դպրաց դաս-երգչախումբի հիմնադրութեան 25-ամեակին առթիւ երգեցողութիւնը կատարեց երգչախումբը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին որկած կոնդակին ընթերցումը կատարեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քինյ. Տեմիրճեան: Իսկ առաջնորդ Սրբազան Հայրը «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով զարդարեց Տէր եւ Տիկին ԸՇԳ եւ Մարօ Գալայճեաններուն կողմէ: Տիար ԸՇԳ Գալայճեան «Գալայճեան» սրահին բարերարութիւնը կատարեց ի յիշարակ իր սիրելի հանգուցեալ հօր՝ Նազարէթ Գալայճեանի, եւ առ ի յարգանք իր սիրելի մօր՝ Տիկին Սիմա Գալայճեանի, որ երկար տարիներ ի վեր Առաջնորդարանին կը ծառայէ Տիկնանց Օժանդակ Մարմի միջոցաւ:

Տէր եւ Տիկին ԸՇԳ եւ Մարօ Գալայճեան անցնող տարիներու ընթացքին Արեւմտեան թեմի պայծառութեան համար կատարած են նաեւ այլ նուիրատւութիւններ, որոնք միշտ ալ գնահատուած են:

Շաբաթ, Նոյեմբեր 15-ին, առաջնորդ Սրբազան Հօր «Բարի Գալստեան» ճաշկերոյթի ընթացքին, Տէր եւ Տիկին ԸՇԳ Գալայճեան 25,000 փոլարի նուիրատւութիւն մը կատարեցին Առաջնորդարանին:

Թեմիս բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպիսկոպոս Տերպրեան եւ Թեմական Խորհուրդը իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն բարերարներ Տէր եւ Տիկին ԸՇԳ եւ Մարօ Գալայճեաններին, որոնց նուիրատւութեան շնորհիւ այսօր ունինք հրապուրիչ «Գալայճեան» սրահը, որ պարի կը բերէ հայ ժողովուրդին:

Այս առթիւ կ'աղօթենք նաեւ հանգուցեալ Նազարէթ Գալայճեանի հոգիի խաղաղութեան համար, որ նոյնպէս բարերար մըն էր եւ իր Տիկնոջ՝ Սիմայի հետ գեղեցիկ օրինակ հանդիսացաւ իր զակին:

Թող Աստուած բազմապարիկ օրհնութիւններով վարձաբեր «Գալայճեան» սրահի բարերարներ Տէր եւ Տիկին ԸՇԳ եւ Մարօ Գալայճեանները եւ իրենց ընտանիքը: